

Verarbeitung der Themen im traditionellen Sinn. Die motivische Arbeit erfolgt auf melodischer Ebene, und das bereits in der Exposition. Der Durchführung wird somit gleichsam der Wind aus den Segeln genommen. Schon von seinen musikalischen Wurzeln her liegt Chatschaturjan das Episch-Lyrische näher als das Dramatische. So ist es sicher kein Zufall, dass er keine Oper geschrieben hat.

Besonders deutlich manifestieren sich die genannten Tendenzen in seinen Werken für Soloinstrument und Orchester, die zweifellos zu seinen Hauptwerken gezählt werden können. Schon der sowjetische Kritiker Boris Asafjew erkannte „eine beständige Neigung zu einem repräsentativen, brillanten Virtuosenstil“ und auch Chatschaturjan selbst gestand seine Vorliebe für das Instrumentalkonzert ein. Das ist wenig verwunderlich, wenn man sich vor Augen führt, dass damals in der Sowjetunion hervorragende Ausführende zur Verfügung standen: u. a. Lew Oborin (Klavier), David Oistrach (Violine), Sergej Knuschewitzkij (Violoncello), später Leonid Kogan (Violine), Mstislaw Rostropowitsch (Violoncello) und Nikolaj Petrow (Klavier) sowie die Dirigenten Alexander Gauk und Jewgenij Mrawinskij. Die Genannten traten nicht nur als Solisten bei Uraufführungen Chatschaturjanscher Werke in Erscheinung, sondern wirkten auch an der Entstehung dieser Werke mittels praktischer Ratschläge an den Komponisten mit.

Chatschaturjan schrieb drei Konzerte und drei Konzert-Rhapsodien für Soloinstrument und Orchester: jeweils für Klavier, Violine und Violoncello. Seinem ersten Biografen, Georgij Chubow, fiel bereits die innere Verwandtschaft der drei Konzerte auf; er sprach von einem „Konzert von Konzerten“.

Tatsächlich lässt sich im formalen Aufbau der einzelnen Werke eine Art Hyperstruktur erkennen. Die Stirnsätze folgen äußerlich der Sonatensatzform – mit den erwähnten Besonderheiten, was die motivische Arbeit und die Stufenfunktion der Harmonik betrifft. Die Mittel- und Schlusssätze jedoch vom armenischen Aschugengesang beeinflusst: wir haben es mit einem Kernmotiv zu tun, das immer weiter variiert wird und sich so von seinem Ausgangspunkt immer weiter entfernt, bis schließlich die Reprise einsetzt. In den Schlusssätzen tritt noch eine aus Themenmaterial des jeweiligen Kopfsatzes gebildete Coda hinzu.

In den drei Konzert-Rhapsodien für Soloinstrument und Orchester aus den Sechzigerjahren baut Chatschaturjan das Formprinzip der Mittel- und Schlusssätze seiner Konzerte aus. Die Rhapsodien sind einsätzig und bilden wiederum eine Art Zyklus. In ihnen tritt jedoch das improvisatorische Moment, das bereits in den Konzerten ansatzweise zutage getreten ist, stärker hervor. Genau genommen müsste man von quasi-improvisatorischen Elementen sprechen, denn diese verhalten sich in den Rhapsodien so weit, dass sie ihrerseits Themenfunktion erhalten und ergo dessen einer symphonischen Verarbeitung bedürften.

Chatschaturjan war also dort angelangt, wo er begonnen hatte. Unter diesen Umständen nimmt es nicht wunder, dass er von der Komposition einer ursprünglich geplanten vierten Konzert-Rhapsodie Abstand nahm. Mehr noch, man darf davon ausgehen, dass dieses ungelöste Formproblem, das sich aus dem Spannungsfeld Volksmusik – Konzertmusik ergab, der Verbreitung der Werke Chatschaturjans auf lange Sicht hinderlich war.

ԳՆԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ. ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԻԻ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՈՒ ՎԱՆՔԵՐԻՆ  
(X-XIV դդ.). ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ, 2002, 134 էջ:

Գագիկ Սարգսյան

Հայ վիմագրութեան մէջ առաւել ստուարաքանակ ու բովանդակալից խումբը նուիրատուական վկայագրերն են: Դրանց աղբիւրագիտական արժէքն անգնահատելի է միջնադարեան Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրաւական, դրամական յարաբերութիւնների, հողատիրութեան ու հողօգտագործման հարկապարհակային համակարգի ուսումնասիրութեան համար:

Հոգեւոր կենտրոններին անշարժ եւ շարժական գոյքի նուիրատուութիւնների ինստիտուտը վաղնջական պատմութիւն ունի: Այդօրինակ գործարքների գրաւոր վկայակոչումները պահպանուել են մատենագրական ու յատկապէս՝ վիմագիր սկզբնաղբիւրներում: Վերջիններիս առատութիւնը պատահական չէ եւ ուղիղ համատեղական է եկեղեցական կառոյցների ու վանքերի բազմաքանակութեանը: Վանքերին եւ առանձին եկեղեցիներին վատարուած նուիրատուութիւնների վիմակատարում էին այդ երեւոյթի՝ արդէն միջնադարում աւանդոյթի վերածուած սովորութեան եւ նուիրատուի ու նուիրառուի միջեւ կայացած գործարքի հետ:

Նուիրատուութեան շարժառիթները, նպատակները, տեսականին, սակազները եւ դրանց առնչուող այլ խնդիրներ պատմագիտական ուսումնասիրութիւններում քանիցս արծարծուել են: Բազմաթիւ թնջուկներ իրենց գիտական լուծումներն ու մեկնաբանութիւններն են ստացել: Սակայն նուիրատուութեան ինստիտուտը, որպէս ամբողջական ու համապարփակ երեւոյթ՝ իր տարաբնոյթ բաղկացուցիչներով,

առանձին քննութեան առարկայ չի դարձել: Գնէլ Գրիգորեանի վերջերս հրատարակուած ուսումնասիրութիւնը միջնադարագիտութեան այս բնագաւառում առկայ բացը որոշակիօրէն լրացնող եւ սպասուած գիրք է եւ իր ընդգրկմամբ, հարցերի մեկնաբանութիւններով, սկզբնաղբիւրների քննախոյզ օգտագործմամբ, ցայժմ չլուսաբանուած կամ մասամբ լուսաբանուած որոշ բառերերի եւ սամբ լուսաբանուած որոշ բառերերի եւ երեւոյթների նորովի քննութեամբ իր արժանի տեղը կը գրաւի Հայոց միջնադարի պատմութեանը նուիրուած հետազօտութիւնների շարքում:

Գիրքը նուիրուած է Հայոց վանաշուք քաղաքամայր Անիի եկեղեցիներին ու վանքերին կատարուած նուիրատուութիւններին:

Անին, որպէս ուսումնասիրութեան առարկայ, հեղինակի կողմից պատահական չի ընտրուել: Մեր խորին համոզմամբ, գլխաւոր շարժառիթը Անիի քաղաքային կեանքի, կենցաղի, վարչական կառուցուածքի, տնտեսութեան, առեւտրի ու արհեստագործութեան հարուստ ներկայանակի առկայութիւնն է, հնագիտական բազմաբնոյթ գտածոները եւ այդ ամէնի արտացոլումը գրաւոր սկզբնաղբիւրներում (հիմնականում՝ վիմական արձանագրութիւններ):

Աշխատութեան բովանդակութիւնը ներառում է 9 գլուխ, որոնցից հինգը վերաբերում են նուիրատուութեան օրինակներին՝ կրպակ, տուն, ձիթհանք, հողատարածքներ, գիւղեր եւ շարժական գոյք, իսկ չորսը այդ օրինակներին ու ընդհանրապէս նուիրատուութիւններին առնչուող

իրողութիւններին: «Կրպակ» գլխում քննութեան են առնուած Անի եւ մերձակայ յուշարձանների որմերին պահպանուած այն վիմագրերը, որոնցում խօսուած է կողպակների նուիրատուութեան մասին: Բաւական հանգամանալից անդրադարձ է կատարուած կողպակ-կրպակ բառերի քննութեանը: Հեղինակը, նշելով կողպակ-կրպակի մի շարք գուգահեռներ՝ «իջեւան, պանդոկ, կոպելիոն, կապեղա», դրանց մէջ նկատուած է իմաստային նոյնութիւն (էջ 17): Միաժամանակ մատնանշում է, որ խնդրոյ առարկայ բառերը հիմնականում առեւտրական հաստատութիւն են նշանակել (էջ 17): Որպէս վերեւում նշուած հասկացութիւնների իմաստային նոյնութեան կամ մերձաւորութեան կռուան՝ հեղինակը մէջբերում է Գոշի Դատաստանագրքի մի բառակապակցութիւն՝ «կապելլայս որ է կողպակ»: Թւում է, թէ այստեղ միջնադարի մեծ իրաւագէտը համեմատել է ոչ թէ տուեալ հաստատութիւնների կիրառական բնութագիրը, այլ դրանցում տիրող բարքերը: Կարծում ենք, որ կողպակ-կրպակ անուանումով վկայակոչուել են զուտ առեւտրական հաստատութիւնները՝ լինի դա առեւտրական թաղերում կամ փողոցներում գտնուող առանձին վաճառատեղիներ, թէ արհեստագործական թաղերում կամ փողոցներում համապատասխան արհեստանոցին կից խանութ-կրպակներ: Հեղինակը միանգամայն տեղին անդրադառնում է նաեւ առեւտրի եւ արհեստագործութեան կազմակերպման ու կարգաւորման խնդիրներին, նշուած հաստատութիւններից գանձուող հարկերին, այդ ոլորտներում քաղաքի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնների խաղացած դերին:

Մեծապէս արժեւորում ենք հեղինակի՝ Անիի առեւտրական եւ արհեստագոր-

ծական թաղերի, շարքերի ու փողոցների անուանումների, տեղադրութեան մեկնութիւնները, որոնք երբեմն համեմուած են նորովի ստուգաբանութիւններով: Այս հատուածում Գ. Գրիգորեանը ի մասնաւորի փորձում է ճշտել փողոցները բառերի իմաստը: Ներկայացնելով նախորդ հեղինակների իմաստամեկնաբանութիւնները՝ առաւել փողոց (Ղ. Ալիշան), փակողի (Կ. Բասմաճեան), փողոցի վրայ գտնուող շէնքի երկրորդ յարկ (Բ. Առաքելեան), նա առաւել հաւանական է համարում վերջին մեկնաբանութիւնը, «որի համար բերում է լրացուցիչ կռուաններ» (էջ 27) եւ եզրայանգում. «Փողոցկտերն Անիում առանձին փողոց էր: Այդպէս կարող էր կոչուել քաղաքի տարբեր մասերում գտնուող հարթ տանիքներով տների շարքը, որոնց կտուրներին կառուցուել էին ուրիշ շինութիւններ» (էջ 27):

Կրպակների եւ դրանց նուիրատուութիւնների վերաբերեալ ընթացողի պատկերացումներն առաւել ընդարձակ ու համակողմանի դարձնելու նպատակով հեղինակը քննութեան է առնում նաեւ մատենագրական վկայութիւնները, ի մասնաւորի՝ Կիրակոս Գանձակեցու եւ Ստեփանոս Օրբելեանի երկերում Արճեշի եւ Նախիջեւանի կողպակների մասին արժէքաւոր տեղեկութիւնները, յատկապէս կարեւորում դրանք վարձակալութեան տալու եւ սեփականատէրերից հարկեր գանձելու հանգամանքը (էջ 32):

Գրքի յաջորդ բաժնում հեղինակն անդրադառնում է տների նուիրատուութիւններին: Քննելով տում բառերի տարբիմաստ բացատրութիւնները՝ հեղինակը որոշ տարակարծութիւն է յայտնում Հ. Բարթիկեանի առաջարկած այն դրոյթի վերաբերեալ, հայաձայն որի՝ Անիում եւ շրջակայքում տում ստելով՝ հասկացել են արհեստանոց, իսկ կրպակը՝ խանութ (էջ

36): Գ. Գրիգորեանը գտնում է, որ այս եզրայանգմանը «որոշ դէպքերում պէտք է վերապահութեամբ վերաբերուել, որովհետեւ միշտ է, որ կրպակները պարտադիր առեւտրական, իսկ տները արհեստագործական նշանակութեան հաստատութիւններ են» (էջ 36):

Կրպակների կապակցութեամբ հիմնականում համամիտ ենք Հ. Բարթիկեանի բնորոշմանը: Այլ խնդիր է, թէ այդ կրպակները որտեղ են գտնուում՝ «արհեստագործական թաղերում, շարքերում, այսինքն՝ կից արհեստանոցներ են, թէ շուկաներում, տօնավաճառներում, ճանապարհներին ու պանդոկ-փնդուկներին կից»՝ գտնուող զուտ առեւտրական հաստատութիւններ:

Ինչ վերաբերում է տներին, ապա մեր համոզմամբ այդ բառով բնորոշել են միայն բնակելի կացարանները, սակայն որոնք կարող էին կից ունենալ արհեստանոց, կրպակ, ըստ այդմ էլ՝ գտնուել ե՛ւ արհեստագործական, ե՛ւ թէ՛ առեւտրական միջավայրում, հարկաւ նաեւ քաղաքի այլ հատուածներում:

Միջնադարեան մատենագիր եւ յատկապէս՝ վիմագիր տեքստերում պահպանուած բազմաթիւ ու տարաբնոյթ բառերը վկայում են, որ բոլոր շինութիւնները, արհեստագործական, առեւտրական, հասարակական հաստատութիւններն ունեցել են իրենց կիրառական նշանակութիւնը բնորոշող անուանումներ, ուստի հարկ է նշել տեսնում մէկ անուան տակ շատ իմաստներ փնտրել:

Ինչպէս վերեւում նշուեց, սոյն աշխատութեան շահեկան կողմերից է քննարկուող կառոյց-հաստատութիւններին առնչուող տարբեր երեւոյթների, գործառոյթների եւ բառերի մեկնաբանութիւնները, որոնք առաւել նշանակալի են դարձնում ուսումնասիրութիւնը: Այ

դօրինակ բառաքննութիւնների շարքում ուշադրաւ է Անիի Շուշան Պահլաւունու Ս. Յակոբ եկեղեցու 1037 թ. դժուարընթեանելի վկայագրում պահպանուած տնով վարձուորը եւ տնով եւ պահիզով բառակապակցութիւնները: Առաջինի առիթով Գ. Գրիգորեանը գտնում է, որ «եկեղեցում նուիրուել է այդ տան վարձակալութեամ տալու իրաւունքը եւ դրանից ստացուող թեւս վարձավճարը, եկամուտը» (էջ 38): Սկզբունքօրէն չառարկելով այս մեկնաբանութեանը՝ հարկ է մատնանշել, որ գրաբարի բառարաններում վարձուոր կամ վարձաւոր բառը հիմնականում ստուգաբանուած է անձի տեսանկիւնից՝ «վարձաւոր - վարձով աշխատող, վարձկան, վարձուոր - վարձով աշխատող, վարձուոր - վարձով աշխատող, վարձ ստացող»: Ստ. Մալաշխատող, վարձ ստացող»<sup>2</sup>: Ստ. Մալաշխատող, բերելով սոյն բառի օգտախասեանցը, բերելով սոյն բառի վարձուոր գործման մի օրինակ՝ ձիապան վարձուոր, նշում է, որ այն «կարող է հասկանալ նաեւ ձիւ վարձով տուող»: «Հայցուել նաեւ ձիւ վարձով տուող»: «Հայցուել նաեւ ձիւ վարձուորը վարձուորը կազեանի» հեղինակները համարելով բխեցնում են վարձաւորից՝ համարելով վերջինիս ռասկորէն արտայայտւածը: Վերջինիս մատնանշում են Գոշի Դատաստանագրքում առկայ վարձաւոր մշակացմանագրքում առկայ վարձուորը: «Հայկավարձ արտայայտութիւնը: «Հայկավարձ արտայայտութիւնը» առանձնացուած է վարձաւորի զեանում» առանձնացուած է վարձաւորի մէկ այլ իմաստը՝ «Որ ինչ յիմի վարձու, մէկ այլ իմաստը՝ «Որ ինչ յիմի վարձու, մէկ այլ իմաստը է, թէ վերջին բավարձայի»<sup>3</sup>: Թւում է, թէ վերջին բացատրութիւնը որոշակիօրէն աղերսուում է Գ. Գրիգորեանի մեկնաբանութեան հետ, այսինքն՝ վարձով տրուող տուն, եւ այլն: Խնդրոյ առարկայի կապակցութեամբ քննարկում ենք ընթացողի ուշադրութիւնը հրաւիրել վիմագրերում քանիցս վկայուած շինականների, ճորտերի, մշակների, դրանց ամբողջ ընտանիքների՝ շինականատուն, լմնածուխ, ողջատուն, նուիրատուութիւնների փաստերին<sup>4</sup>:

Արդեօ՞ք Անիի նուիրագրում էի

փաստուած այսօրինակ մի իրողութիւն: Այսինքն՝ նուիրուել է վարձու աշխատողի կամ մշակի տուն-ընտանիք:

Շահեկան են հեղինակի պրպտումներն ու եզրայանգումները՝ առնչուած տնով եւ պահիզով՝ վերջինս որպէս բանջարանոց, պարտէզ (յաւելեմք նաեւ տնամերձ հողամաս իմաստը), կորոյ շինած տունս եւ զբակս՝ որպէս խոպան, ամայի հողատարածքում կառուցուած շինութիւն, զուկակ եւ ծուազուկակ՝ որպէս «փողոցի, նեղ փողոցի կամ նրբանցքի... առեւտրի ու եկամտաբեր կենտրոնատեղի, երկու դուռ տներ» որպէս մէկական ցանկապատով երկու տներ» արտայայտութիւնների հետ:

Տների նուիրատուութիւնների մասին հեղինակի քննութիւնները հարստացուած են Անիի հնագիտական պեղումների արդիւնքներով, որոնք յաւելեալ լոյս են սփռում տների տեղադրութեան, կառուցուածքի, ճարտարապետական ձեւերի ու յորինուածքի ճշգրտման ու ուսումնասիրութեան վրայ:

Միջնադարեան վիմագրերում բազմաթիւ են ձիթհանների նուիրատուութեան փաստերը, ինչը պայմանաւորուած էր ձիթի որպէս լոյսի աղբիւրի եւ սննդամթերքի լայն տարածուածութեան ու կենցաղային անհրաժեշտութեան հետ:

Գ. Գրիգորեանը ներկայացնում է ձիթհանների նուիրատուութեան երեք օրինակ՝ Անիի Ս. Փրկիչ, Ս. Գրիգոր (Բախտաղեկի կամ Խաչատրի) եկեղեցիների եւ Մայր տաճարի համապատասխանաբար՝ 1036, 1271 եւ 1286 թթ. վկայագրերը:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում երկրորդ վիմագիրը: Այն յայտնաբերուել է Անիի պեղումների ժամանակ եւ առաջին անգամ հրատարակուել Ն. Մառի կողմից. հետագայում հրատարակել են նաեւ Կ. Բասմաճեանը, Ս. Բարխուդարեանը, Յ. Օրբելին, Ա. Մա-

նուչարեանը:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել վիմագրի խնդրոյ առարկայ հատուածը.

Թվիին] :Ձի: (1271) ՇԱՀԵՐ ՎԱՐԴԱԳԵՏՍ ԵՏՈՒ ՁԻԽՄՂ ՀԱՅԵՐԵՆԻ.../ ԳՈՐ ԶԻԹԱԳԻՆԷ. ԶՈՐ Ի ՀԻՅՄԱՆՅ ՇԻՆԵՑԻ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ]...:

Հրապարակներում բնագրի հիմնական տարրնթերցումները վերաբերել են թուականին, ՎԱՐԴԱԳԵՏ բառին եւ կոտրուած հատուածների վերականգնումներին:

Ն. Մառը եւ Կ. Բասմաճեանը ՎԱՐԴԱԳԵՏ-ը վերծանել են ՎԱՐԴԱԳԵՏ: «Դիւանի» տեքստում նոյնպէս կարդում ենք ՎԱՐԴԱԳԵՏ, չնայած ըստ Ս. Բարխուդարեանի, որն օգտուել է գրքի ձեռագրից՝ Յ. Օրբելին վերծանել է ՎԱՐԴԱԳԵՏ. «Նշուած հրատարակութիւնների մէջ՞ (բացի ակադ. Օրբելու) վարդապետ է վերծանուել, որը միանգամայն սխալ է: Ա. Մանուչարեանը փորձել է լրացնել պակասող հատուածները ՀԱՅՐԵՆԻ] բառից յետոյ՝ ՄԲ ԳՐԻ: Խնդրի քննարկման համար էական նշանակութիւն ունի վկայագրի բնոյթի եւ Շահեր վարդապետի կատարածի ճշտումը: Մեր համոզմամբ, վկայագիրը երկբնոյթ է՝ ե՛ւ նուիրատուական, ե՛ւ շինարարական: Եթէ նուիրատուութեան առարկան ակներեւ է ձիթագին, ապա շինարարութեան օրիակտը տարակարծութեան տեղիք է տալիս նախեւառաջ նախադասութեան շարահիւսութեան կապակցութեամբ: Վիմագրում աղբիւրագիտական եւ բառագիտական մեծ կարեւորութիւն եւ հետաքրքրութիւն է ներկայացնում ձիթագին բառը, որը հին հայերէնի բառարաններում բացակայում է: Գ. Գրիգորեանը նշում է բառիս՝ Ն. Մառի եւ Ա. Մանու-

չարեանի դիտարկումները՝ առաջինինը՝ որպէս ձիթի այգի՞, երկրորդինը՝ որպէս ձիթհան, սակայն չի որոշակիացնում իր մօտեցումը: Հետագայ շարադրանքից դատելով՝ թուում է թէ նա համակարծիք է երկրորդին:

Մեր պրպտումները հնար տուեցին փաստելու այս եզակի եւ ուշագրաւ տերմինի եւս մէկ յիշատակութիւն, որը թոյլ տուեց Անիի վկայագրի բովանդակութիւնը մեկնել այլ տեսանկիւնից: Հոռոմոսի վանքի ժամատան կամարներից մէկի վրայ փորագրուած վկայագրում կարդում ենք. «Թվ ՈՂԲ (1253) կամաւն այ ես յոհաննես արքաուն որդի ապրկան եւ ամուսին իմ մուլուքան միաբանեցաք հոռոմոսի վանաց սր յովանիսի եւ տվաք :Բ: տուն իմ գանձագին որ ակուրնաց կոչի եւ այլ տվի յամեն տարի որչապի կենդանի եմ :Ե: Դահեկան ԶիթԱԳԻՆ... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»<sup>10</sup>: Ինչպէս տեսնում ենք, այս օրինակում բաւական որոշակի է ձիթագին բառերն ընդգրկող արտայայտութեան իմաստը. վանքի Ս. Յովհաննէս եկեղեցուն նուիրուել է տարեկան հինգ դահեկան ձիթ գնելու համար, այսինքն՝ փորագրողը կամ արձանագրութեան պատուիրատուն օգտագործել է ձիթ եւ գին (արժէք) բառիմաստների համադրումը՝ որպէս այդ երեւոյթի՝ ձիթի գին կամ արժէք, արտայայտման ձեւ:

Այսօրինակ մեկնաբանման իմաստաւորմամբ փորձենք դիտարկել Անիի վկայագրի հաղորդումը: 1892 թ. պեղումներով բացուած այս եկեղեցին, ինչպէս ներկայացնում է Ս. Բարխուդարեանը, ներկայացնում է X դարով (ենսկզբնապէս թուագրուել է X դարով (ենթադրաբար), սակայն հետագայ ուսումնասիրութիւնները յանգեցրել են XIII դարին (Վ. Յարութիւնեան, Ս. Բարխուդարեան եւ այլք)<sup>11</sup>: Աւելին՝ վերջիններս Ս. Գրիգորի շինարար-ճարտարապետ են

համարում նոյն Շահեր վարդապետին:

Գ. Գրիգորեանը նոյնպէս անդադառնում է առկայ թնջուկներին՝ մատնանշելով նախորդ հեղինակների կարծիքները, սակայն այստեղ նոյնպէս չի որոշակիացնում իր վերաբերմունքը՝ ի՞նչ է հիմանց շինել Շահերը: Յամենայնդէպս նա գտնում է, որ զորի հիմանց շինեցին «աւելի շուտ կը պատշաճէր որեւէ կառոյցի շինութեան» (էջ 44) եւ, որպէս այդ մօտեցման հաւաստում, նշում է Ա. Մանուչարեանի ձիթագինը՝ որպէս ձիթհան դիտարկումը: Գ. Գրիգորեանը համամիտ է Ս. Բարխուդարեանի՝ սոյն արձանագրութիւնը գուտ նուիրատուական համարելուն:

Խորհրդածութիւնների արդիւնքում հակուեցինք հետեւեալին. արձանագրութիւնը (ինչպէս վերեւում նշել ենք) ե՛ւ նուիրատուական է, ե՛ւ շինարարական: Շահեր վարդապետը եկեղեցու ձիթի կարծիքները հոգալու նպատակով նուիրել է, իրենքը հոգալու նպատակով եկեղեցուն թերեւս, գումար, այսինքն՝ եկեղեցուն նուիրած ձիթի գինը: Նոյն վկայաանհրաժեշտ ձիթի գինը է իր կողմից Ս. գրով նա արձանագրել է իր կողմից Ս. Գրիգոր եկեղեցին շինելու իրողութիւնը, այսինքն՝ զորը վերաբերում է ոչ թէ ձիթագինին, այլ եկեղեցուն: Մեր կարծիքով, ի նպաստ առաջադրած վարկածին են խօսում Շահերի՝ այդ եկեղեցու ճարտարապետ, ձիթագինի ոչ շինութիւն-կատարապետ, ձիթհանի ոչ շինութեամբ՝ ուրիշ լինելու, ձիթհանի առնչութեամբ՝ ի հիմանց շինեցի արտայայտութեան՝ ոչ ի հիմանց շինելու եւ, անշուշտ, Հոռոմոսի յարիւր լինելու եւ, անգամանք՝ վկայագրի առկայութեան հանգամանքները:

Նոյն բաժնում Գ. Գրիգորեանը քննութեան է ենթարկել մի շարք վիմագրերում յիշուած մի բառերը, որը մինչ այդ քանիցս հայագէտների ուշադրութեանն է արժանացել: Առաջադրուել են կարծիքներ, ստուգաբանութիւններ՝ եր-

բեմն իրարից բաւական տարբեր:

Դրանցից առաւել համակողմանին եւ համոզիչը լեզուաբան-վիմագրագէտ, յատկապէս վիմագիր բառեզրերի եւ արտայայտութիւնների խորագիտակ ստուգաբան Ս. Աւագեանի քննութիւնն է: Հեղինակի փորձը՝ եւս մէկ անգամ անդրադառնալ խնդրոյ առարկային, դատելով շարադրանքից՝ թւում է արդարացուած: Նա անհամաձայնութիւն է յայտնում Ս. Աւագեանի եզրակացութեանը եւ գտնում, որ՝ «Բառը պէտք է քննել կոնկրետ պատմական միջավայրում» (էջ 47), այսինքն՝ բառիս իմաստը տարբեր պատմա-աշխարհագրական միջավայրում կարող է տարբեր կամ առնուազն նոյնը չլինել, չնայած Լ. Գիւզալեանի եզրայանգումը՝ միը՝ որպէս աղբիւրի գետնէայ կառոյց, որին համակարծիք է հեղինակը, որոշ չափով արտայայտուած է Ս. Աւագեանի ստուգաբանութեան մէջ:

Աշխատանքի մի ստուար բաժին նուիրուած է հողատարածքների, գիւղերի եւ եկամտաբեր այլ հաստատութիւնների նուիրատուութիւններին, որոնց մասին բազմաթիւ վկայութիւններ են պահպանուել ինչպէս Անիի, այնպէս էլ հարիւրաւոր այլ վիմագրերում:

Որպէս հողատարածքի (տուեալ դէպքում՝ արտի) նուիրատուութեան օրինակ՝ Գ. Գրիգորեանը նորից անդրադառնում է Ապլլարի բազմաբանութեանը, որտեղ, ի թիւս այլ նուէրների, եկեղեցին տէր է դառնում ՄԵԾ ԱՐՏ ԲԵՆԵՆՑՆ :Ճ: (100) ԿԱՊՃՈ: Սահմանափակուելով արտի նուիրատուութեան այս եւ եւս երկու օրինակներով՝ հեղինակը հիմնաւոր ու բազմակողմանի քննարկում է կապիճ բառեզրը:

Բառարանային ստուգաբանութիւններին համընթաց ներկայացում են ինչ-

պէս խնդրոյ առարկային անդրադարձած հայագէտների մեկնաբանութիւնները, այլեւ համադրական աղբրներ դիտարկում օտար վարչա-քաղաքական միջավայրերում: Ուշագրաւ եւ համոզիչ են թւում հեղինակի անդրադարձները կապիճի տարբեր կշռորդներին՝ մեծ, միջին եւ փոքր: Առաւել գնահատելի է Գ. Գրիգորեանի փորձը կշռորդների վերլուծութեամբ որոշելու Բեյբենց արտի տարածաչափը եւ ցանուող սերմացուի քանակը:

Հայ վիմագրութեան մէջ Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած եկեղեցու հարաւային որմին փորագրուած ընդարձակ շինարարական-նուիրատուական արձանագրութիւնը բովանդակութեամբ ու աղբիւրագիտական նշանակութեամբ շահեկանօրէն առանձնանում է: Գ. Գրիգորեանը ի մասնաւորի քննութեան առարկայ է դարձնում վիմագրի այն հատուածը, որտեղ խօսուում է մի շարք գիւղերի, հողակտորների եւ պանդոկ-փնդուկի նուիրատուութեան մասին: Սկզբում նա անդրադառնում է ցայժմ տարակարծութեան տեղիք տուած ՅՆԴՈՅ<sup>12</sup> (ՅՈՒՆԴ) կամ ԼՆԴՈՅ (ԼՈՒՆԴ) տեղանունը (Ն. Մառ, Կ. Բասմաճեան, Պ. Մուրադեան): Չնայած հեղինակը չի որոշակիացնում իր վերաբերմունքն այս վերծանութեան նկատմամբ, սակայն հետագայ շարադրանքից դատելով՝ թւում է թէ նա համակարծիք է Կ. Բասմաճեանի հետ՝ ԼՆԴՈՅ, (բայց ոչ որպէս լնդեմ բայարմատի): Օգտուելով առիթից՝ մենք փորձեցինք մէկ անգամ եւս ստուգել բառիս վերծանութիւնը: Հարկ ենք համարում նշել, որ վերծանողները սակաւ ուշադրութիւն են դարձրել (կամ անտեսել են) երկու, մեր կարծիքով, կարեւոր հանգամանքի վրայ. ԵՐԿԻՐՆ բառից յետոյ առկայ է մէկ տառատեղ, եւ ինչպէս այդ տողն ամբողջութեամբ, այնպէս էլ տողի

քննարկուող հատուածը ընկած են քարերի, հորիզոնական եւ ուղղահայեաց կարերի վրայ, ինչը կարող էր նպաստել տառերի որոշ մասնիկների քայքայմանն ու կտրմանը: Այժմ աւելի կոնկրետ. ուշադիր զննելով ԵՐԿԻՐՆ բառի Ն-ն եւ դրան յաջորդող ՈՒ-ից յետոյ փորագրուած տառը (նկատառեալ քարի հորիզոնական կարը, որի շնորհիւ երկու դէպքում էլ կտրուել են Ն տառի ստորին աջ անկիւնները կարճ ուղղահայեացի հետ)՝ բաւական նմանութիւն ենք տեսնում, ուստի հաւանական ենք գտնում Պ. Մուրադեանի ՈՒ-ից յետոյ Ն վերծանութիւնը: Բաց տառատեղի առկայութիւնը եւ այդ հատուածի՝ հորիզոնական եւ ուղղահայեաց քարակարերի հանդոյցում գտնուելը յուշում են մեզ այդտեղ մէկ կամ, որ աւելի քիչ հաւանական է, երկու տառերի փնտրումը<sup>13</sup>:

Ըստ այսմ՝ առաջարկում ենք ստուեալ հատուածի վերծանութեան մեր վարկածը (բաց տեղում վերականգնելով Տ տառը, որի ուղղահայեաց ստեղծը համընկնում է քարի ուղղահայեաց համընկնումը)՝ Ի ԿԱՐՈՒՅ ՅԵՐԿԻՐՆ, ՏՈՒՆ ԼՆԴՈՅ :Բ: ԴԱՆԳՆ, այսինքն՝ տունը ընդոյի երկու դանգը: Եթէ տունը հասկանալի է, ապա ինչ կարող էր նշանակել ընդոյն: Ակներեւ է, որ այստեղ գործ ունենք, ինչ-որ բառի սեռականի հետ: Հակուած ենք կարծելու, որ այդ բառը ունի է (կամ բարբառային՝ հունի), որը բարբառներում բացատրուած է՝ սերմ ուտելի, արմտիք, սերմանիք<sup>14</sup>, ուտելի սերմ, հատիկ, արաբերէն՝ hinta - ցորեն, ՆՆԽ - կտաւատ<sup>15</sup>:

Այս ենթատեքստում ենթադրելի է ընդեղէնի, սերմացուի, ցորենի կամ կտաւատի ամբարանոց, պահեստ, թերեւս, ուղղակի մի կառոյց կամ շինութիւն, որտեղ պահուել են տուեալ մթերքները,

եւ որի երկու դանգը նուիրուել է Ս. Գրիգորի եկեղեցուն: Մեր վարկածը խիստ թէական է եւ կարօտ լրացուցիչ հիմնաւորման:

Ուշագրաւ են արձանագրութեան ընձեռած նիւթի հիման վրայ հեղինակի պրպտումներն ու դատողութիւնները գիւղերի, հողակտորների եւ եկամտաբեր այլ հաստատութիւնների նկատմամբ սեփականատիրական իրաւունքի, նուիրատուութեան ձեւերի, Տիգրան Հոնենցի՝ որուութեան ձեւերի, Տիգրան Հոնենցի՝ որպէս նորահաստատ առեւտրա-վաշխառուական խաւի ամենացայտուն ներկառուական խաւի ամենացայտուն ներկայացուցչի անձի եւ գործունէութեան վերաբերեալ:

Ներկայ ուսումնասիրութեան շահեկան կողմ կարելի է դիտել հեղինակի անդրադարձը առանձին բառեզրերի եւ հասկացութիւնների բառաքննութեանը: Հասկացութիւնների վկայագրի ԽԱՆՇԵՐԻ է Տիգրան Հոնենցի վկայագրի ԽԱՆՇԵՐԻ է Տիգրան Հոնենցի բառակապակցութեան ՉՈՐԿԱՆ ԼՈՂԵՐՆ բառակապակցութիւնը, համաստուգապատում վերլուծութիւնը, համաստուգապատում վերծանութեան մեր վարկածը՝ «խաչորկան հողերը բառակապակցութիւնն արտայայտում է այն տեղապակցութիւնն արտայայտում է այն տեղանունն զաղափարը, որտեղ եղել է խաչ եւ որեւէ հիմք չկայ այն ամենանունն հետ», (էջ պուած Խաչաւոր անձնանունն հետ), (էջ 62): Նշենք միայն, որ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ XII դարի նուիրագրում միակ վկայուէրը այդ անձնանունն միակ վկայուէր է: Այն հանդիպում է նաեւ Կեթիլընը է: Այն հանդիպում է Հիւսիսաչառիսի եւ Հրազդան քաղաքի Հիւսիսաչառիսի կողմում, Մեղրաձոր տանող ճանապարհի ձախ հատուածում գտնուող գերեզմանոցի վկայագրերում:

Այնուհետեւ հեղինակը բաւական ընդարձակ շարադրանք է յատկացնում փնդուկ-պանդոկների նուիրատուութիւններին: Նա իրաւացիօրէն գուգահեռներ է տուել փնդուկ-ասպնջականոց-հոգետեսնում փնդուկ-ասպնջականոց-հոգետեսնում-խանապար հասկացութիւններում գրանք դիտելով «այն հանդրուանները,

որոնք կոչուած էին օթեւան լինելու առեւտրականների, ճանապարհորդների, ուխտաւորների համար» (էջ 63): Այստեղ նոյնպէս Գ. Գրիգորեանը չի սահմանափակուած մատենագիր եւ վիմագիր սկզբնաղբիւրների հաղորդումների հիման վրայ վերը նշուած հաստատութիւնների եւ դրանք բնորոշող անունների հետագոտութեամբ ու ստուգաբանութիւններով: Նա լայնօրէն անդրադառնում է այդ շինութիւնների ճարտարապետական ու յորինուածքային նկարագրին, կառուցուածքային առանձնայատկութիւններին: Ուշագրաւ է հեղինակի կամար բառերի մեկնաբանութիւնը՝ որպէս առեւտրական հաստատութիւն:

Խանայար բառերի քննութիւնը նա մասնաւորեցնում է Անիի Ս. Առաքելոցի 1346 թ. արձանագրութեան Գ.Ա.Կ.Կ.Ռ.Յ.Ի ԽԱՆԱՊԸՐԻ ԴԻՄԱՆ ԴԻՄԱՅ Է բառակապակցութեան վերլուծութեամբ: Հեղինակը գտնում է, որ «Գրականագիտական խանայարն այն արհեստանոցն էր, ուր կարում էին գլխարկներ», եւ որ այստեղ «շեշտուել է, ոչ թէ արհեստագործական փողոցը կամ թաղը, այլ արհեստանոցը» (էջ 69): Կարծում ենք, որ վկայագրի հեղինակը շեշտել է ոչ թէ արհեստանոցը (գրակիրոց), այլ Ամիր Հասանից գնուած եւ Ս. Առաքելոցին նուիրուած կուղպակի գտնուելու վայրը, այն է՝ գրակիրոց արհեստաւորական թաղում կամ փողոցում գտնուող խանայարի դռանն շինուած: Հեղինակը, շարունակելով իր միտքը, թերեւս ունենալով մի փոքր կասկած, գրում է. «Յամե-նայնդէպս խանայարը, կցուած գրակիրոցին, ցոյց է տալիս կոնկրետ արհեստագործութեան տեղը» (էջ 69): Նախ. խանայարի եւ գրակիրոցի կից լինելը այստեղ փաստուած է, եթէ, ինչպէս վերեւում նշեցինք, գրակիրոցը դիտենք որպէս գրակարողների արհեստագործական թաղ

կամ փողոց: Ինչ վերաբերում է արհեստագործութեան տեղին, ապա, իրօք, խանայարը գտնուել է գրակարողների միջավայրում, այսինքն, ինչպէս եզրայանգում է հեղինակը՝ «կապ է ունեցել արհեստի այդ ճիւղի հետ» (էջ 69):

Գ. Գրիգորեանը նուիրատուութիւն է դիտում նաեւ շինարարական եւ նորոգչական աշխատանքները, ինչը փաստող մէկ տասնեակ վիմագիր օրինակների հիման վրայ շարադրուած է գրքի մի փոքրիկ բաժին:

Վանքերին կամ առանձին եկեղեցիներին կատարուած նուիրատուութիւնների ցանկում կարեւոր տեղ են զբաղում նաեւ շարժական գոյքի նուիրատուութիւնները: Այսօրինակ ընծաների տեսականին բաւական լայն է եղել: Հեղինակն ի թիւս վիմագրական վկայութիւնների անդրադարձել է նաեւ թանգարանում պահուող աւելի քան երեք դրակալներին եւ մէկ պղնձէ խաչին:

Հեղինակի հետաքրքրութիւնների շրջանակը չի սահմանափակուած նուիրատուութեան օբիեկտների քանակական փաստագրումներով կամ դրանց հետ կապուած բառերային ստուգաբանութիւններով, եւ, քանի որ վիմագրական ատղձը բազմաբնոյթ է, նա քննութեան առարկայ է դարձնում նաեւ այնպիսի խնդիրներ, որոնք, թուում է թէ, անմիջականօրէն չեն առնչուում բուն առարկային: Հեղինակի նման մօտեցումը միանգամայն արդարացուած է եւ անհրաժեշտ, ինչը նպաստել է ուսումնասիրութեան բովանդակային եւ տեսական հարստացմանը: Այս նպատակադրմամբ հեղինակն ընթացողի ուշադրութեանն է արժանացնում նուիրաբերուած հողատեսքերի տեսականին ի դէմս՝ արտ, հող, այգի, պահեց հասկացութիւնների: Որպէս հողատեսակ՝ նշուած են նաեւ կորդը, տան բակը,

ծաղկոցը, տախը, լանջահիմ, գետեգրը, քարափ եւ մացառ վայրը (էջ 79):

Հեղինակը, որպէս հող բառերից առաջացած անուանում, նշում է Հոնենցի վիմագրում յիշուած կաթողիհողը: Լուսանկարի ուշադիր գնումը ցոյց է տալիս, որ այդ բառի ...թողի հատուածը համապատասխան նշանով յապաւուած է, այսինքն՝ բառը հարկ է վերականգնել կաթողիկոսի հող:

Գիտական արժէք եւ հետաքրքրութիւն է ներկայացնում գրքի «Դրամական համակարգեր, կայքերի գներն ու եկամտաբերութիւնը» բաժինը: Վիմագրական վկայութիւնները հսկայական նիւթ են տրամադրում նշուած խնդիրների ուսումնասիրման ու լուսաբանման համար: Այդ նիւթի վերհանումն ու օգտագործումը հեղինակին հնարաւորութիւն են տուել քննարկելու զարգացած միջնադարում գործող դրամական միաւորների, դրանց շրջանառութեան եւ գործածութեան ոլորտների, չափ ու կշռի հետ կապուած խնդիրները: Փորձ է արուել փաստագրուած դրամական նուիրատուութիւնների միջոցով որոշելու եւ ճշտելու նուիրաբերուած գոյքի արժէքները: Վերջինիս կապակցութեամբ հեղինակը կանգ է առնում կրպակների սակագնի բացայայտման խնդրին՝ զուգահեռ քննելով նաեւ մարտի քանակի քանակի եւ դրացուող պատարագների քանակի եւ դրամարժէքի վկայութիւնները: Այս պլանով արժէքները Գ. Գրիգորեանին թոյլ են տուել փաստելու, որ «կրպակները իրենց մեծութեամբ, քաղաքում զբաղեցրած տեղով, կառուցման որակով եւ արտադրական սարքաւորումներով կամ կահաւորմանը ունեցել տարբեր գներ՝ պայմանաւորուած յատկացուած պատարագաժամերի քանակով» (մէկը 20-25 դահեկան արժէքով):

Այս կապակցութեամբ, ի յաւելումն

ասուածի, նշենք, որ պատարագների միասնական սակագնի, թերեւս, համահայաստանեան բնոյթ չի կրել, այլ ներկայացնում է եղել իւրաքանչիւր առանձին վանական հաստատութեան, եւ այն վերջինս է սահմանել: Պատարագի սակագնի չափը պայմանաւորուել է նուիրատուութեան նպատակով եւ բնոյթով: Մի դէպքում նուիրատուն ուղղակի գնել է պարագ, եւ վանքը այն յատկացրել է նուիրուած գումարի քանակին համապատասխան՝ անշուշտ տեղում սահմանուած սակագնով: Միւս դէպքում, տարբեր անշուշտ ու շարժական գոյքի կամ վանքի ինչ-ինչ կարիքները հոգալու համար դրամական նուիրատուութիւնների դիմաց միաբանութիւնն իր հայեցողութեամբ յատկացրել է պատարագներ որոշակի քանակով: Նշենք այսօրինակ երկու փաստ. Սանահնի վիմագրերից մէկում նուիրուած 500 դահեկանի դիմաց յատկացուել է ընդամենը երկու, իսկ Յովհաննավանքում՝ 300-ի դիմաց՝ մէկ պատարագ: Այսպիսի օրինակներ բաւական շատ են:

Գրախօսուող աշխատութեան վերջին գլխում ներկայացուած են Անի վիմագրերից յայտնի նուիրատուները, նրանց անձի եւ գործունէութեան համառօտ բնութագրմամբ: Գրքում գետեգրուած ուսերէն եւ անգլերէն ամփոփումները, առանձնանունների եւ տեղանունների (ցանկալի կը լինէր նաեւ առարկայական) ցանկերն առաւել արժեւորում են աշխատութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մեր յօդուածը. ՊԱՀ, թիւ 3, 1977, էջ 274:
- 2 Ստ. Մախաւեան, ՀԱՐ, հոտ. 4, Երեւան, 1945, էջ 313:
- 3 Նոր բառերը Հայկազեան լեզուի, հոտ. 2, վերահրատարակութիւն, Երեւան, 1981, էջ 729:
- 4 Ս. Աւագեան, Վիմագրային արձանագրութիւնների քաղաքագիտութիւն, Երեւան, 1978, էջ 246-253:

- 5 Գ. Գրիգորեանը մատնանշում է նաև ձեռքի օգտագործման մի երրորդ բնագաւառ՝ Անիի շէնքերի պատերի եւ տանիքների ձիթապատումը:
- 6 Նկատի ունի Մատին եւ Բասմանեանին:
- 7 Ս. Բարխուդարեան, *Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ*, Երեւան, 1963, էջ 76:
- 8 Ս. Բարխուդարեանը գրում է, որ «արձանագրութիւնը նուիրատուական բնոյթի է եւ չի պարզում Շահեր վարդապետի կառուցողական կապը յուշարձանի հետ» (Աշ. աշխ., էջ 76): Ա. Մանուչարեանը սկզբում արձանագրութիւնը համարում է շինարարական, իսկ լետոյ գտնում, որ այն «ըստ էութեան նուիրատուական է եւ վերաբերում է Ս. Գրիգոր եկեղեցուն» (Ա. Մանուչարեան, *Քննութիւն Հայաստանի IV-XI դդ. շինարարական վկայագրերի*, Երեւան, 1977, էջ 224):
- 9 Գ. Գրիգորեանը այս բացատրութիւնը անհասկանալի է համարում՝ կապուած «գոր ի հիմանց շինեցի» բառակապակցութեան հետ:
- 10 *Monuments et Mémoires de la Fondation Eugène Piot*, Հոռոմոսի վանքը, Թորոս Թորամանեան (Անտիպ Գիթեր), Ա. Թ. Պալատեան, Ժ. Մ. Թիէռի, Ժ. Փ. Մահէ, *tome quatre-vingt-un Académie des inscriptions et belles-Lettres*, Paris, 2002, p. 199.
- 11 Ա. Մանուչարեանը գտնում է, որ կառուցուել է աւելի վաղ, իսկ արձանագրութեան վկայած շինարարութեան փաստը վերագրում է ձիթհանին (Ա. Մանուչարեան, Աշ. աշխ., էջ 225):
- 12 Բառիս առաջին տառը որեւէ կերպ հնարատր չէ կարդալ Յ, քանզի ամբողջ վիմագրում առկայ են բազմաթիւ, բաւական վայելչագիր Յ-եր, որոնք դոյզն-իմչ նմանութիւն չունեն Աշուած տառին:
- 13 Ամբողջ արձանագրութեան մէջ առկայ են այսօրինակ վեց հանգոյց, եւ միայն այստեղ է, որ բաց է թողնուած մէկ կամ երկու տառատեղ:
- 14 ՆԲՀԼ, հտ. II, էջ 550:
- 15 ՀԱԲ, հտ. III, էջ 601: